

Ե Ր Ա Ջ Ն Ե Ր Ը

(ԱՆՈՆՅ ԷՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՆՏԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ
ՆՈՐԱԳՈՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՋԱՅՆ)

1. — ՄԵՐ ՆԵՐԱՇԽԱՐՀԸ

Ժողովուրդներու գրական կեանքը, իր յառաջդիմութիւնը կը պարտի մեծաւ մասամբ գրական զգրոցներու, — որոնք արտայայտութեան նոր ձևեր կը բերեն: Գիտական-բժշկական շարժումն ալ ունեցած է իր զգրոցները, որոնք երեւոյթները ըմբռնելու և բացատրելու նոր եղանակ մը որդեգրելով, կը ջանան ընդլայնել մեր մտաւորական հորիզոնը:

Քառորդ զարէ ի վեր, բժշկութեան հոգեախտաբանական մարզին մէջ, աւատրիացի բժիշկի մը՝ Յրոյաի հոգեվերլուծում, *psychnalyse* ըսուած նոր տեսութիւնը և մեթոտը, ինքզինքը պարտադրած է: Մասաւորական մեծ շարժում մը ծայր տուած է այս տեսութեան շուրջ. նոյնիսկ արդի գրականութիւնը և թատրոնը ազդուած են իր գաղափարներէն:

Պիտի ջանամ քանի մը յօդուածներով նախ պարզել Յրոյաի տեսութիւնը, և յետոյ ամփոփել երազի էութեան և նշանակութեան մասին Յրոյաի և ուրիշներու տեսութիւնները, օգտուելով նորագոյն հրատարակութիւններէ, գլխաւորաբար Ֆրանսացի ծանօթ հոգեախտաբանի մը *Dr. A. Marie*-ի վերջին գործէն (*La psychanalyse*):

Մարդու ենթագիտակից աշխարհը

Երկար ժամանակ հոգեբանութիւնը կը կարծէր թէ մեր հոգին լոկ գիտակցական վիճակ մը ունի և մեր մշտարթուն գիտակցութիւնն է որ վճռական դեր մը կը խաղայ մեր կեանքին մէջ:

Այս տեսութիւնը աստիճանաբար սրբագրուեցաւ: Մարդկային զգացումներու, մտածումներու և ազրուումներու մանրազննին քննութիւնը ապացուցուց որ գիտակցութիւնը մեր հոգիին մակերեսն է, որու տակ կ'ընդլայնի և կը խորանայ անյայտ, մեր կամքէն գրեթէ անկախ աշխարհ մը զոր կոչած են ենթագիտակցական կամ Անգիտակցական հոգի (*Subconscient, Inconscient*):

Յրոյաի արժանիքը կը կազմէ այն որ ինք մասնանիշ ըրաւ թէ ինչ հսկայ ազդեցութիւն ունի այդ ենթագիտակից հոգին մարդոց կեանքին և ճակատագրին վրայ: Մեկնելով այդ կէտէն, ան քրննական նոր եղանակ մը, նոր մեթոտ մը դտաւ՝ հետախուզելու համար մարդոց թաքուն այդ ներաշխարհը:

Ինչպէ՞ս կազմուած է սակայն հոգիի ենթագիտակից այդ խորքը:

Ըստ Ֆրոյտի և իր աշակերտներուն, մարդկային հոգին կարելի է նմանցնել երկրաբանական խաւերուն: Ամենահին ժամանակէն, նախամարդկային և նոյնիսկ անդրմարդկային էակներու զոյաութիւնները, յաջորդական սերունդներու, մինչև մեր պապերուն և հայրերուն ազրումները, խաւ առ խաւ կուտակուած են և կազմած են այսպէս մեր ենթահոգին:

Բոլոր մարդիկ հետեւաբար, անկախ իրենց անհատական խառնուածքէն, ունին համայնական խորք մը, որ թէև անծանօթ՝ բայց իր հիմքերուն մէջ նոյնն է: Հոգիէ է որ կը բխին մարդոց տարերային պահանջները, ներքին անզսպելի ցանկութիւնները և մղումները: Հոն է մարդկային բնազդներու օրօրոցը:

Այդ հասարակաց ներքնախաւէն դէպի վեր, անդիտակից հոգին՝ աւելի վերջնազոյն տպաւորութիւններով ճոխացած, աստիճանաբար կը պայծառանայ և կը բարձրանայ դէպի գիտակցական մակերեսը որ մարդուն անձնական ինքնայատուկ գիմագիծն է, իր գործն է:

Նորածին մանուկին կամ վայրենի մարդուն քով գիտակցութիւնը չէ կազմուած կամ չափազանց նրբին մաշկի մը կը նմանի. միակ տիրապետողը այդ ենթագիտակցական հոգին է իր նախնական ախորժակներով: Որքան վայրենի մարդը բարձրացած է դարերու ընթացքին դէպի քաղաքակրթական հանրակենցաղը, կամ որքան մանուկը կը հասուննայ միջավայրի կամ կրթութեան պահանջներու համաձայն, նոյնքան գիտակցական մակերեսը ցանց կը կապէ, կը տարածուի, կը բարդանայ անդիտակից հոգիին վրայ:

Գիտակցութիւնը կը վերածուի կափարիչի մը որ կը փակէ իր տակը ետուն-զեռուն, մշտաշարժ ընդունարանը մարդու առհաւանական հոգիին: Ու այդ մթին քառսին մէջ է որ կ'երթան ընկղմելունակ մեր բոլոր տպաւորութիւնները, մտածումները և լիշատակները, զորս կը հաւաքենք մեր կեանքի ընթացքին:

Այդ խորունկ ծալքերուն մէջ կը մնան անոնք, օր մը չէ օր մը երևան գալու համար:

Սեռային բնազդը՝ Յիմք մարդու հոգեկան կառուցուածքին

Ֆրոյտի տեսութեան համաձայն, մեր ենթագիտակցական հոգիին ամէնէն զօրաւոր և կեսական պահանջը՝ սեռային բնազդն է, տեսակի և ցեղի ինքնապահպանութեան այդ մղումը զոր ինք կոչած

լիպիսո (libido): Ինչպէս անասունին, նոյնպէս նախամարդուն և մանուկին մէջ առաջին մէկ օրէն այդ բնազդն է որ կը յայտնուի, անոր ներքին ձգտումներուն ուղղութիւն կուտայ: Ամբողջ կեանքի ընթացքին անոր անզսպելի, տիրական ազդեցութիւնը զգալի է:

Լիպիտոն, բառ Ծրոյաի, նախապէս տարերային, անդիտակից պահանջ մըն է մանուկին քով, բայց աստիճանաբար կը բիւրեղանայ, կը գիտակցանայ տարիներուն հետ, արբունքի ժամանակ ստանալու համար իր պայծառ իմաստը:

Ընդհանրապէս կը կարծուի թէ մանուկներու քով մինչև որոշ տարիք մը սեռային պահանջը զոյութիւն չունի. սխալ է այդ կարծիքը: Երախան իր ծնած օրէն իսկ ենթակայ է որոշ ինքնարուխ զգայութիւններու, որոնք նոյն յաւիտենական ձգտումին՝ լիպիտոյի արտայայտութիւններն են: Ծծելու բնազդը, շրթունքով և մատներով շօշափելու տարրական հաճոյքը, մօր հանդէպ երախայի հակումը, ամենանախնական կայծերն են թաքուն կրակին, որ աստիճանաբար կը ազիտ սաստկանալ և տարածուի: Լիպիտոյի առած զանազան ձևերը այնուհետև, առաջին օրերէն մինչև արբունքը, չափազանց ճոխ պատկեր մը կը կազմեն, զոր նկարագրելը մեր նպատակէն դուրս կը մնայ: Ամէն ոք երբ անկեղծօրէն իր մանկական անցեալը քննել կամ երախաներուն աշխարհը գիտել ուզէ, պիտի նշմարէ լիպիտոյի շեշտ գիծը կեանքի այդ առաջին տարիներուն մէջ: Պայքարը անգիտակցականի եւ գիտակցականի միջեւ:

Հոգեկան-ֆիզիքական ներաշխարհի մէջ թագնուած լիպիտոյի այդ պահանջները, փափաքները, միշտ զոյութիւն ունին ամբողջ կեանքի ընթացքին: Կենսաւոր էակներու յատկանիշն իսկ են անոնք: Բայց մինչ անասունի, մանուկի կամ վայրենի մարդուն քով այդ պահանջները կը բխին, կը յայտնուին և կ'ազդեն առանց ուշ-զգպումի, քաղաքակրթուած չափահաս անհատի քով — գիւրին է հասկնալը — անոնք ենթակայ են որոշ հակակշռի մը:

Մարդը ընկերական է. ընկերական համակենցազը որ ներկայիս հասած է այնքան բարդ և զարգացած աստիճանի մը, հիմնուած է որոշ ընկալիչ սովորութիւններու, պատշաճութիւններու, բարքերու վրայ. ատոնց ամբողջութիւնը կը կազմէ ընկերային բարոյականը:

Քաղաքակիրթ մարդուն քով այդ բարոյական ըմբռնողութիւնը կը կազմէ ամենագօրեղ հրամայականը, որ տուն կուտայ անոր կեանքին: Մանուկ հասակէն իսկ կրթութիւնը, միջավայրի թելադրութիւնները, օրէնքը, կրօնքը իր մէջ կ'աշխատին ամբապնդելու այդ բարոյականի իմաստը և ուժը:

Վերջ ի վերջոյ մեր ամբողջ ապրելակերպը, մեր մտայնութիւնը, մեր գիտակցութիւնը կը ձևաւորուին համաձայն այդ բարոյականին: Ստիպուած ենք կտմ ենթարկուելու հասարակած այդ օրէնքին կամ ընկերութիւնը կը հարուածէ, կը մեկուսացնէ մեզ: Այլապէս հանրային կեանքը պիտի վերածուի քաոսի մը: